ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար «Ծխախոտ», «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 25.12.2018թ. N 422/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.01.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ, Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղը զբաղեցրած «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ արձանագրեց, որ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ն ամբողջությամբ չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես չի ներկայացրել ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ-1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիրը, թիվ-2, թիվ-2.1 հավելվածները, ինչպես նաև չի ներկայացրել ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ համաձայնագիրը, որով աշխատանքների կատարման նպատակով հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, միաժամանակ Հավելված-2-ում նշել է որ ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենցիայի պատճենը, սակայն հրավերով նման պահանջ չկար, այլ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ աշխատանքի արդյունքի հանձնման ժամանակ հաշվի առնելով գնման առարկայի առանձնահատկությունները, կատարողը պարտավոր է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 22.08.2002թ. թիվ 1458-Ն որոշմամբ նախատեսված որոկավորման չափորոշիչներից մասնագիտական որակավորման չափանիշերին ներկայացվող պահանջներին համապատասխանելու վերաբերյալ սահմանված տեղեկանք:
-Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 7.16 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյան

Անդամներ՝ Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան